

Նախարարաց խորհուրդը երէկ երեկոյան գումարեց իր ընթացիկ նիստը՝ Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ, գլխաւորութեամբ նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտի: Ժողովին առաջ, նախագահ Լահուտ եւ վարչապետ Հարիրի ունեցան առանձին հանդիպում մը:

Ժողովը քննարկեց ընթացիկ օրակարգ մը եւ յատկանշական որոշումներ չտուաւ: Քննարկուած գլխաւոր օրակարգը եղաւ դրամատուններու թղթածրարը:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԳՈՒՄՓԿՎ ԺՈՂՈՎ ՄԸ ԳՈՒՄԱՐԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ գոնփակ ժողով մը գումարեց տնտեսական մարմիններու ներկայացուցիչներուն հետ, քննարկելու համար կառավարութեան տնտեսական եւ ընկերային որոշումները, ինչպէս՝ աշխատանքներու փոխադրածախի եւ կրթանց-պատի յաւելումը, յաւելեալ արժէքի տուրքն ու առեւտրական մենաշնորհներու քննարկը:

Չորս ժամ տեւած այս ժողովին ներկայ գտնուեցան նախարարներ Քարամ Քարամ, Ալի Քանսո, Ժորժ Աֆրամ եւ Պասէլ Ֆլէյհան, առեւտուրի եւ ճարտարութեան տնտեսական նախագահ Ատնան Քասսար, տնտեսական եւ ընկերային հարցերու խորհուրդի նախագահ Ռոժէ Նասնաս, ճարտարարուեստի համախմբուածի նախագահ Ժաք Սարրաֆ, Պէյրութի Առեւտրականներու Միութեան նախագահ Նատիմ Ասի, գործարարներու համախմբուածի նախագահ Արման Ֆարէս, Դրամատուններու Միութեան նախագահ Ժոզէֆ Թարապէյ, Հարիրիի տնտեսական հարցերու խորհրդական Լազի Եուսէֆ եւ այլ անձնաւորութիւններ:

Վարչապետ Հարիրի հանդիպումին ընթացքին վերահաստատեց, որ կառավարութիւնը նախանձախնդիր է տնտեսական վերականգնումի որոշումներուն շուրջ խորհրդակցելու տնտեսական մարմիններուն հետ, ընդգծելով, որ 2002ի ընթացքին կը գործադրուին այդ մարմիններու նախապէս ներկայացուցած առաջարկները, պետական պաշտօնեաներու թիւի կրճատումին, ապապետականացումին եւ պետական հաստատութիւններու գործունէութեան բարելաւումին մասին:

Ժողովին ետք հրապարակուած հաղորդագրութիւնը ըսաւ, որ ժողովականները լաւատեսութիւն չկայտնած են Լիբանանի տնտեսութեան ապագային նկատմամբ, նկատի առած պետութեան պարտքերը դարձանելու կառավարութեան լուրջ ճիգը, արար եւ

Շարք՝ էջ 10

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՎԵՐԱՊԱՀՈՒԹԵԱՄԲ ԿՂՐՏԱՅԱՑՈՒՑՈՒՄ ԱՎԻ ԹԻԻ 1397 ՈՐՈՇՈՒՄԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Հանրապետութեան նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց «Արաբական Ընդհանուր Համագումար»ի պատուիրակութիւնը: Հանդիպումին ընթացքին ան դիտել տուաւ, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի թի 1397 որոշումը, որ հրապարակուեցաւ երեքշաբթի օր, կը յատկանշուի խորհրդարանութեամբ եւ ընդհանրութիւններով, եւ խոստը կը համեմատի նախապէս նոյն առնչութեամբ տրուած որոշումներուն, որոնց ոչ մէկ ակնարկութիւն կ'ընէ:

Միջապգային որոշումներու յստակութեան պակասը մեկնաբանութեանց մէջ շփոթ ստեղծած է անցեալին եւ ասոր պատճառով սկսած բանավեճը կը շարունակուի մինչեւ օրս, իսկ այս նոր որոշումը պիտի սրէ բանավեճը, որովհետեւ մէկէ մաւելի մեկնաբանութիւն կարելի է լով անոր, ըսաւ նախագահ Լահուտ, աւելցնելով, որ այս որոշումը իրարմէ չի պանապաներ բռնագրաւող Իսրայէլն ու վայրագութեանց զոհ պաղեստինցի ժողովուրդը:

Նախագահ Լահուտ ընդգծեց անհրաժեշտութիւնը, որ արաբեիսրայէլեան հակամարտութեան որեւէ լուծում մեկնի միջապգային որոշումներու ամբողջական գործադրութեան, որովհետեւ այդ որոշումներու անտեսումը կամ պանոնք ուրիշներով փոխարինելու ճիգը փորձաքար մըն է ՄԱԿի հաւաստիութեան:

Նախագահ Լահուտ վերահաստատեց, որ արաբական վեհաժողովը պիտի է նուիրուի միջարաբական զօրակցութեան եւ արաբ ժողովուրդներու օրինական պահանջներու վերահաստատումին, հիմնուելով ՄԱԿի նախկին որոշումներուն վրայ, որոնց զօրավիգ կանգնած են բոլոր պետութիւնները, որովհետեւ անոնք առողջ հիմն են արդար, ամբողջական են վերջնական խաղաղութեան:

Պաղեստինեան շրջաններու բնակչութեան դէմ Իսրայէլի գործած ամէսօրեան զարդերը ոչ մէկ անդրադարձ պիտի ունենա պաղեստինցի ժողովուրդի ինթիֆատային վրայ, ոչ ալ անոր հողը ապատարելու, անկախ պետութիւն կերտելու, Երուսաղէմը մայրաքաղաք դարձնելու կամ պաղեստինցի գաղթականներու տունդարձը ապահովելու այդ ժողովուրդին մղած պայքարին վրայ, ըսաւ ան:

Նախագահ Լահուտ վստահութիւն յայտնեց, որ արաբ ղեկավարները կը գիտակցին, թէ որքան վտանգաւոր են այս իրադարձութիւնները եւ Պէյրութի վեհաժողովին անոնց տալիք որոշումները պիտի համապատասխանեն արաբ ժողովուրդներու այդ ղեկավարներու ուսերուն դրուած պարտականութեան:

ԸՍՏ ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆԻ՝

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ ՊԻՏԻ ԸՆՈԱՆԱՅ ՈԱՄԱԼԼԱՅԷՆ ԱՆԹԸՆԻ ԶԻՆԻ ԺԱՄԱՆԵՅ ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔ



Պաղեստինցիներ կը դիմադրեն իսրայէլացի զինուորներու ներխուժումներուն:

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն երէկ հրահանգեց բանակին հանգրուանային հեռացումը Ռամալլայէն: Բարձրաստիճանի պաշտօնատար մը ըսաւ, որ իսրայէլեան ուժերը ամբողջութեամբ պիտի հեռանան Ռամալլայէն, սակայն պաշտօնական օղակ մը պահելով քաղաքին շուրջ: Ան աւելցուց, որ բանակը աստիճանական կերպով պիտի հեռանայ: Պաշտօնատարը չըսաւ, սակայն, թէ բանակը ե՞րբ պիտի սկսի հեռանալու պաղեստինեան քաղաքէն: Անոր յայտարարութեան կարճ ժամանակ մը ետք, ակնատեսներ յայտնեցին, որ իսրայէլեան հրասայլերը իրենց դիրքերուն վրայ կը մնան՝ փակած պահելով ճամբաները, որոնք Ռամալլայի կեդրոնական բաժինները կը տանին:

Պաղեստինեան իշխանութեան տեղեկատուութեան նախարար Եասէր Ապտալա ըսաւ, որ Իսրայէլ նոր «խաղ» մը կը դիմէ հեռանալու յայտարարութեամբ: Ապտալա աւելցուց, որ պաղեստինցիները Ռամալլան գրաւուած պիտի նկատեն, մինչեւ որ իսրայէլացի վերջին պիտուորը հեռանայ:

Շարոն, որ պօրտուր ճնշումներու կ'ենթարկուի Միացեալ Նահանգներու կողմէ, պաշտպանութեան նախարար Պենիամին Պրն Էլիպարի հրահանգեց սկսել Ռամալլայի պարպումին: Շարոնի գրասենեակէն հրապարակուած յայտարարութեան մէջ կ'ըսուի, որ վարչապետը կը յուսայ, թէ այս գործողութեան արդիւնքները պիտի նպաստեն պիտուորներու նպատակներու իրականացման:

Շարոնի որոշումը արդիւնքն է ամերիկեան ճնշումներուն, դիտել կու տան մեկնաբաններ: Միացեալ Նահանգներու նախագահ ձորս Պուշ Զոնթըրաքի օր յանդիմանած էր Իսրայէլի կառավարութիւնը, յայտարարելով, որ անկախ իր միջոցառումներով չ'օժանդակեր պիտուորը մը հաստատելու ճիգերուն:

Շարք՝ էջ 3

ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐԱՊԱՅԵՐ

ԸՍՏ ՀԱՐՑԱԽՈՅՁՆԵՐՈՒՆ՝ ԺՈՍՓԷՆ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑԷ ՇԻՐԱՔԸ



Փաք Շիրաք

ՓԱՐԻՉ, 14 (ՌՈՅԹԸՐԸ).— Ֆրանսայի նախագահ Փաք Շիրաք մեղադրեց երկրին ձախակողմեան կառավարութիւնը՝ ռճրագործութիւններու, պատանիներու սպանութեան, բռնաբարոյններու եւ զոհուածներու բարձրացող ալիքին համար:

Շիրաք ձախակողմեանները նկատեց ոչ խիստ, բաղդատած՝ իր կողմնակիցներուն օրերուն որդեգրուած խիստ քաղաքականութեան եւ պահպանողական միջոցառումներուն:

Այս դատապարտումները յաջորդեցին նախագահական ընտրութիւններուն առիթով մրցակից թեկնածուներ Փաք Շիրաքի եւ Լիոնէլ Ժոսփէնի մասին եղած հարցախոյզի մը արդիւնքներուն, ուր Շիրաք պարտութիւն արձանագրած էր:

«Ֆրանսայի մէջ կը տիրեն երկու տարբեր մշակոյթներ: Անոնցմէ մէկը կը կոչուի թոյլ եւ աւանդական է ձախակողմեաններուն համար, եւ աւելի իրապաշտ մշակոյթ մը, որ աջակողմեաններուն կը վերաբերի եւ ինչ որ ես կը նախընտրեմ», ընդգծեց Շիրաք:

Նախագահը աւելցուց նաեւ, որ ձախակողմեաններու մօտեցումը նպատատար չէ եւ ոչ բաւարար՝ ռճրագործութիւններու դէմ պայքարելու:

Նախագահական ընտրութիւններու առաջին հանգրուանը տեղի պիտի ունենայ 21 Ապրիլին, երկրորդը՝ 5 Մայիսին:

ՊԱՏԵՐԱԶՍԸ ՎԵՐՍԿՍՈՂ ԿՈՂՍԸ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԿՐԷ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ, «Ֆրանս Փրէս» լրատու գործակալութեան տրուած հարցազրոյցի մը ընթացքին վերահաստատեց, որ Լեոնային Ղարաբաղը երբեք մաս չէ կազմած անկախ Արարկիւնային, եւ իրականութեան հիմք չկայ Լեոնային Ղարաբաղը Արարկիւնային կազմին մէջ ներառելու համար:

Պատասխանելով Լեոնային Ղարաբաղի տագնապը պիտուորական միջոցներով լուծելու պարպեցումի պետական գործիչներու յայտարարութիւններուն վերաբերեալ հարցումի մը, նախագահ Քոչարեան ըսաւ, թէ ո՛վ որ սկսի պատերապմը, հաւանական է, որ պարտուի: Քոչարեան աւելցուց, որ պատերապմը քաղաքական լուրջ պարտութիւն պիտի ըլլայ պայն վերակողմին համար, որ նաեւ պատերապմի հետեւանքներու պատասխանատուութիւնը պիտի կրէ իր ժողովուրդին հանդէպ:

Անդրադառնալով տագնապի խաղաղ լուծման նկատմամբ Հայաստանի յանձնառութեան՝ նախագահ Քոչարեան նշեց, որ ոչ մէկ կողմ կը շահի տագնապին անլոյծ մնալէն: «Հարաւային Կովկասի մէջ խաղաղութիւնը եւ քաղաքական կայունութիւնը կարեւորագոյն նախապայմաններ են թէ՛ իւրաքանչիւր երկրի եւ թէ՛ ողջ տարածաշրջանի վարգաքման համար», ըսաւ նախագահը:

ԻՐԱՆ - ԸՅԱՍՏԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան ձորս Օրտուէյ հարթեմի «Ալգ» թերթին հետ հարցազրոյցի մը ընթացքին 13 Մարտին յայտարարած էր, թէ Ուաշինկթըն դէմ չէ Հայաստանի եւ Իրանի միջեւ դրացիական կապերու հաստատման: Օրտուէյ աւելցուցած էր, թէ «Իրան կը զօրակցի ահաբեկչութեան եւ ձեռք կը բերէ հաւաքական ոչնչացումի պէնքեր: Հայաստան, իբրեւ Իրանի դրացի երկիր, պէտք է զգուշ ըլլայ այս առումով»: «Այս մտահոգութիւններէն մեկնելով՝ մենք դէմ ենք Իրանի բնական կապի եւ քարիւղի մարպերէն ներս որեւէ ներդրումի», ըսած էր ամերիկացի դեսպանը՝ պատասխանելով Հայաստան - Իրան կապատարի շինութեան առնչուող հարցումի մը:

Անդրադառնալով նոյն հարցին՝ նախագահ Քոչարեան «Ֆրանս Փրէս» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցին ընթացքին ըսաւ. «Հարաւային Կովկասի իւրաքանչիւր կողմը պահանջէ որոշ պայմաններու եւ հաւասարակշռութիւն: Հայաստան չի փորձեր շահ փնտրել այլ երկրներու միջեւ գոյութիւն ունեցող հաղադարձութիւններուն մէջ, այլ, ընդհանրապէս, կը փորձէ շահ պահովել այդ հակադրութիւնները հարթելով: Ինչ կը վերաբերի Իրանին, ապա Հայաստան այդ երկրին հետ ունի բազմամեայ բարիդրացիական յարաբերութիւններ, որոնք ներկայիս կը դրսեւորուին վարգաքող առեւտրական - տնտեսական համագործակցութեան մէջ: Մեր յարաբերութիւններուն մէջ չկայ ռազմական որեւէ լուրջ ուղղութիւն: Իսկ Իրան - Հայաստան կապատարի կառուցման օրագիրը այժմ մշակման հանգրուանին մէջ է եւ մենք կը շարունակենք աշխատանքը այդ ուղղութեամբ»:

ԿԻՊՐՈՍ

ՅԱՐԳԱՆՔԻ ՎԵՐՁԻՆ ՏՈՒՐՔ՝ ՔԻՓՐԻԱՆՈՒԻ

ՆԻԿՈՍԻԱ, 14 (ՌՈՅԹԸՐԸ).— Կիպրոս Հինգաբթի օր անշարժացած էր, երբ հապարտոր անձեր յարգանքի տուրք կը մատուցէին նախկին նախագահ Սփիրոս Քիփրիանուի, որ այս շաբաթ մահացած էր քաղցկեղի հետեւանքով:

Մակարիոս արքեպիսկոպոսի մահէն ի վեր պետական մեծագոյն յուղարկաւորութեան ընթացքին, պետական գրասենեակները, վաճառատուները փակուած են եւ դպրոցականները կանուխ տուն դրկուած են:

Կառավարութիւնը երեք օրուան սուգ հռչակած է:

Քիփրիանու 1977էն 1988 նախագահ եղած է Կիպրոսի, երկու անգամ՝ խորհրդարանի նախագահ եւ 1960ի անկախութեանէն ետք՝ անոր առաջին արտաքին գործոց նախարարը:

ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄԱՌԻՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԵՍՊԱՆ ՊԵԹԸԼԸ



Նախարար Համսուտ կ'ընդունի Պեթըլը:

Միացեալ Նահանգներու դեսպան Վինսթըն Պեթըլը երէկ այցելեց արտաքին գործոց նախարար Մամսուտ Համսուտի, ապա յայտարարեց, որ անոր հետ քննարկած է Պէյրուսի մէջ գումարուելիք արաբական վեճաժողովի նախապատրաստութիւնները: Պէթըլը ըսաւ, որ Համսուտ իրեն ներկայացուցած է արաբ արտաքին գործոց նախարարներու Գահիրէի ժողովի արդիւնքներն ու այս ամիս Պէյրուսի մէջ գումարուելիք արաբական վեճաժողովի կազմակերպման հարցերը:

Ուաշինկթըն կը յուսայ, որ Պէյրուսի արաբական վեճաժողովը կ'որոշէ գործադրել արաբական աշխարհի յայտարարած կեցուածքը Միջին Արեւելքի խաղաղութեան գծով:

Պէթըլը հաւատարմեց, որ Միացեալ Նահանգներ կը շարունակեն Միջին Արեւելքի մէջ խաղաղութիւն հաստատելու իրենց ճիգերը, նկատել տալով, որ այս ծիրէն ներս ամերիկացի պատուիրակ զօր. Անթընի Զինի Հինգլաբըթի օր կը ժամանէ շրջան, մինչ Մ. Նահանգներու փոխ նախագահ Տիք Զէյնի կը շարունակէ արաբական իր շրջապատը:

Այս շարժումներուն եւ արաբական նախաձեռնութիւններուն նպատակը մէկ է. «Նախաձեռնութիւնը եւ անոր հասնելու համար բանակցութիւններու վերստու՛մը», ըսաւ ան:

ՆԱԽԱՐԱՐ ՄԸՐ ԱՅՅԵԼԵՑ ՕՍԱՐ ԲԱՐԱՍԷԻ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր երէկ վեճահաստատեց, որ ժողովրդավարութիւնն ու կարծիքը արտայայտելու ազատութիւնը Լիբանանի համար հիմնական նշանակութիւն ունին եւ պէտք է պահպանել զանոնք, «բայց այսօր պատահածը ազատութիւն է՝ առանց ժողովրդավարութեան, որ երբեմն անիշխանութեան կը տանի»: Ան կ'ակնարկէր առեւտրական ուսանողներու ցոյցին:

Նախկին վարչապետ Օմար Քարամէի տրուած իր այցելութենէն ետք, Մըր կոչ ուղղեց նման պարագաներու նախօրօք արտօնութեան դիմում ներկայացնելու, որպէսզի նախարարութիւնը կարենայ գործադրել անհրաժեշտ ապահովական եւ երթեւեկի միջոցառումները:

Միւս կողմէ, Մըր ըսաւ, որ ինք չէ քննադատած վարչապետ Ռաֆիք Հարիրիի այն յայտարարութիւնները, որոնք կը վերաբերին տնտեսական տագնապին մէջ քրիստոնեաներու դերակատարութեան, այլ պարզապէս պատասխանած է թղթակիցի մը հարցումին, թէ ինք քրիստոնեաները պատասխանատու կը նկատէ՞ տնտեսական տագնապին: «Յաջողօր օրը տեսնուեցայ վարչապետ Հարիրիի հետ եւ ան ըսաւ, որ իր խօսքերը այդպէս մեկնաբանուած են, բայց իր գաղափարները տարբեր էին», յայտնեց Մըր:

Քարամէ նոյն առիթով ըսաւ, որ ուսանողական ցոյցերը սխալ տեսնելու կատարուին եւ պէտք էր նկատի առնել տեղական եւ շրջանային պայմանները:

Կ'ՈՒԶՈՒԻՆ
● Աղամանդաշար փորձառու գործառններ: Հեռ. 03-954741:

ԳՐԱՌՈՒԱԾ ՕՐ
ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԻԿԱՆՑ ՕժԱՆՂԱԿ ՄԱՐՄԻՆ «ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ» 8 ՄԱՅԻՍ 2002

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆԱՍԱՅՈՅՅԵՐ ԵՒ ՅՈՅՅԵՐ

Առեւտրական ուսանողներ երէկ «Մարտ 14» 13րդ տարեգարձին առիթով նստացոյցեր կատարեցին կարգ մը համալսարաններու մէջ: Ուսանողներուն մէկ մասը Լիբանանեան համալսարանի Ֆանարի մասնաճիւղէն ցոյց մը կատարեց դէպի Պառուշի, Տրքուանէ, Մըքալլէս, Հայէք, իսկ մաս մը՝ Սափէս համալսարանէն դէպի Շեւրոյէ, Հըրշ Թապէթ - Հայէք ճամբով: Գործակալներու տունդարձի ժամուն «գուգարիպած» ցոյցերը երթեւեկի խճողում պատճառեցին: Ցուցարարներուն կ'ընկերակցէին ապահովութեան ուժերու բազմաթիւ անդամներ:

Ցուցարարները սուրիական ներկայութեան դէմ եւ զօր. Միշէլ Առեւի գորակցութեան յայտնող կանչերով եւ պատաստներով խմբուեցան Հայէք հրապարակին մօտ:

Ապահովական ոչ մէկ խախտում կամ միջադէպ արձանագրուեցաւ:

ՊԵՆՁԻՆԻ ՍԱԿԵՐՈՒ ԶԱԵԼՈՒՄ

Ուժանիւթի նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտունի որոշումով երէկ պենզինի սակերը կը բացվի 200 լ. ոսկիի յաւելում, իսկ ֆիոլ 0,11ի սակերը՝ երկու տոյարի յաւելում: Նոր սակերն են.

- 98 օրքան պենզին՝ 20,200 լ. ռ.
- Առանց կապարի 95 օրքան պենզին՝ 18,000 լ. ռ.
- Առանց կապարի 90 օրքան պենզին՝ 17,800 լ. ռ.
- Քարիւղ՝ 7,400 լ. ռ.
- Ֆիոլ 0,11՝ 146 տոյար

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀՐԱՉ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Ծաբաթ, 16 Մարտ 2002ի առաւօտեան, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բոլոր այն ազգայինները, որոնք տեղեկութիւն կ'ուզեն ունենալ լիբանանեան պետութեան կողմէ գործադրուած TVAH տուրքին մասին, կրնան ներկայացնել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Շաղոյեան» կեդրոն, 2րդ յարկ, ամէն Ուրբաթ, կէսօրէ ետք ժամը 4ԷՑ 5, բացատրութիւն ստանալու համար ընկեր Յակոբ Արաքաճեանին (երդուեայ հաշուեքննիչ), իրենց դիմագրաւած դիմարութիւններուն գծով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

ՀՍԿՈՒՄԻ ԸԱԲԱԾ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ

Ս. Գրիգոր Լուսաւորիչի ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊԻ տօնին եւ Անթիլիասի մայրավանքի ՈՒՍՏԻ ՕՐուան առիթով, ՀՍԿՈՒՄԻ աւանդական արարողութիւնները տեղի պիտի ունենան այս շաբաթ, 11 - 15 Մարտի միջոցին, երեկոյեան ժամը 5:00ին:

Հսկումի ժամերգութենէն ետք, միաբան հայրեր հոգեւոր խորհրդածութիւններ պիտի կատարեն քրիստոնէական եկեղեցւոյ հայրերու կողմէ նշուած եօթը առաքինութիւններուն մասին: Խորհրդածութիւնները տեղի պիտի ունենան հետեւեալ կարգով.-

Ուրբաթ, 15 Մարտ
Ս. Գեղարդ արդ. Քիւսպէկեան՝ «Ժուկալուրի»

Սիրով կը հրաւիրուին հաւատացեալները՝ հոգեկան այն ներքին պատրաստութեան, որպէսզի առաւել գիտակցութեամբ ապրին եւ արժեւորեն ՈՒՍՏԻ ՕՐուան իմաստը իրենց կեանքին մէջ եւ նորոգուան հաւատքով մասնակցին Ս. ԳՐԻԳՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉԻ ԱՍՏԻ եւ արքայաւ մատուցներուն թափօրին, Կիրակի, 17 Մարտին:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՄԱՀԱԶԴ

Լ. Օ. Խաչի Շրջանային Վարչութիւնը խոր կակիծով կը գուժէ իր վաստակաւոր անդամուհիներէն, տարիներու Լ. Օ. Խաչի արձուկներու վարիչ պատասխանատու ընկերուհի՝

ՍԵՂԱ ՍԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 9 Մարտ 2002ին:

ՄԱՀԱԶԴ

Լ. Օ. Խաչի «Անահիտ» մասնաճիւղի վարչութիւնը կը գուժէ իր շրջանի վաստակաւոր ընկերուհիներէն՝

ՍԵՂԱ ՍԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 9 Մարտ 2002ին:

ՄԱՀԱԶԴ

Տիար Ժողէֆ Զափարեան եւ զաւակները՝ Տալիտա, Վիվիան եւ Վիգէն
Տէր եւ տիկին Ժողէֆ Սիմոն եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յարութ Պէրպէրեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ժորժ Արայանեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Էլի Մըրտի եւ զաւակունք
Տիար Յարութ Արայանեան
Տիար Ժորժ Անարրեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, քրոջ եւ հարազատին՝

ՀԵՐՄԻՆ ՉԱՓԱՐԵԱՆԻ (ՏՃԵԱԼ՝ ՀԱՄԱ, 1931ԻՃ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 14 Մարտ 2002, առաւօտեան ժամը 5:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 15 Մարտ, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հաճուցեալին բնակարանը, Ժուկուտ, Զէյթունի փողոց, «Ձամպաքա» շէնք, 7րդ յարկ, Շաբաթ 16, Կիրակի, 17 եւ երկուշաբթի 18 Մարտին:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Երուանդ Յովակիմեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յարութիւն Տէր Գէորգեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յակոբ Տէր Գէորգեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, աներմօր եւ հարազատին՝

ԱՐՈՒՍԵԱԿ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆԻ (ՏՃԵԱԼ՝ ՅԱԿՈՒԲԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Ամսթերտամի մէջ, Հոլանտա, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Ամսթերտամի մէջ:
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին տէր եւ տիկին Երուանդ Յովակիմեանի բնակարանը, Ժուկուտ, «Ղուսուպ» շէնք, Նամակատան դիմաց, Բ. յարկ, Շաբաթ 16 եւ Կիրակի 17 Մարտին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00ԷՃ կէսօրէ ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզա) եւ պետական հիւանդանոցային բուժում:
- 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տամա):
- 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
- 4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (Խըթ) դիմումներ:
- 6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 7) Զողաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
- 8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (ԱճԵ Էլ Աճ) հետ կապուած հարցեր:

Դիմողները պետք է ներկայանան «Շաղոյեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենեակ եւ կամ մայրաքան ներկայացնալը հեռաձայնել 01-259881 եւ 01-242582 քիւրուին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿ ԵՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆԱԽԵՐԱՆԸ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ «ՄԱՏԵԱՆ ՈՂՐԵԳՈՒԹԵԱՆ - ՆԱՐԵԿ» Ի 1000ԱՄԵԱՅ ԶՈՐԵԼԵԱՆԻՆ

Հանդիսապետութեամբ՝ ԱՄԵՆ՝ ԵՒ ԳԵՐ՝ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. (Կաթողիկոս Պատրիարքի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց)

Բանախօսութեամբ՝ ԴՈԿՏ. Հ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ԹՈՓԱԼԵԱՆԻ

Այսօր՝ Ուրբաթ, 15 Մարտ 2002, ժամը 20:00ին, «Արարտեան» սրահ, Հայ Կաթողիկէ պատրիարքարան, Ժեթառուի:

ԾԱԽՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

60ԷՃ 90 քառ. մէթր տարածութեամբ արդիական կառոյց, Նաիր Էլ Սոթ, Օթոստրատ Ումիթի սկիզբը, «Սանթրո» Ն. ՏԵՏԵԱՆ: Դիմել՝ հեռ. 03 - 204309 քիւրուին:

ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ԻՆԹԻՏԱՍԱՅԻՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱԸ ԶՕՐ. ԲՄԵԼ ԼԱՀՈՒՏԻ

Կիրակի, 17 Մարտ 2002, առաւօտեան ժամը 11:00ին, ԵՈՒՆԵՍԵՔՕԻ սրահին մէջ:

ԿԵՆՍՈԼՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ԵՐԿՐԱԶՎՈՆԵՐՈՒ

Պետական պաշտօնատեղիներու հարցերու խորհուրդը կը յայտարարէ, որ քննութիւն - մրցանքով պիտի ընտրուին կենսալոյտի նախարարութեան համար կենսալոյտային մարզի զանազան երկրաչափներ: Զննութիւն - մրցանքին մասնակցելու համար դիմումները պետք է ներկայացնել ամէնէն ուշը Հինգշաբթի, 28 Մարտ 2002ին, խորհուրդի կեդրոնատեղիին, Ռաշիտ Զարամէ փողոց (Վերտօն): Յաւելեալ մանրամասնութիւններ ստանալու համար դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Շաղոյեան» կեդրոն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

Ս. ՅԱԿՈՒ ԵԿԵՂԵՑԻ - ԷՇՐԵՅԻԷ ԳՊՐԵՎԱՆՔԻ ՄԱՆԵՐԸ՝ Ս. ՅԱԿՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Ի գիտութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին կը յայտարարենք, թէ այսօր՝ Ուրբաթ, 15 Մարտ 2002, երեկոյեան ժամը 6:30ին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Դպրեվանքի սարկաւակները, կիսասարկաւակներ եւ ծառայատեղիներ իրենց տեսուչ՝ ԳԵՐՊ. Տ. ՇԱՀԱՆ Ծ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ հանդիսապետութեամբ, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ պիտի կատարեն երեկոյեան հսկումի (խաղաղական եւ հանգստեան) ժամերգութեանց արարողութիւնը: Այս առիթով պիտի քարոզէ՝

ՀՈԳԵ՝ Տ. ՄԱԿԱՐ ԱՐԵՂԱՅ ԱՇԳԱՐԵԱՆ

Դպրեվանքի առաքելութիւնը մարմնաւորող եւ հայ ժողովուրդի հոգեւոր անդամաւոր մէջ ըլլալու եւ ծառայելու գիտակցութիւնը առաւել եւս ւորացնելու գիտակցութեամբ մեր ժողովուրդի պաւակներու ներկայութիւնը յոյժ փափաքելի է: Մեր արքայաւոր հայրապետներու Աստուածահաճ շարակաւներու ընդմէջէն հաղորդուելու լաւ առիթ մը եւս: Կը հրաւիրենք ձեզ բոլորը:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅԱԿՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱԿՆԱՐԿ

ՄՈՒԹԱԼԻՊՈՎԸ՝ ՎԿԱՅ

Տարբերակները անցանկալի արտադրության բուկալներին, երբեմն շուրջ տեղի ունեցած զինուորական գործողություններում...

Այս իմաստով վերջին ակնարկները կու գայնույնին Ազգային ակադեմիայի նախագահ Հայտարար Ալիսեյեանի...

Ինչպես «Արմենիա» լրատու գործակալությունը կը հաղորդէ, նախագահ Հայտարար Ալիսեյեանը...

Զարմանալի չէր երբեք, որ Ազգային ակադեմիայի նախագահը...

Այս բոլորին մէջ արեւմտահայ գրականությանը անդամները...

Պատմութիւնը ցոյց կու տայ արդէն, որ Խոջալուի դեպքերը...

Աւելին, Խոջալուի շրջանը նախքան ծանօթ դեպքերով վերաբերուած էր...

Ան իր յայտարարութեան մէջ հաստատած էր, որ խոջալուի բնակիչները...

Այս բոլորին ետք յիշենք կը շարունակեն խոջալուի պատմութիւնը...

1000 ԹՈՆ ՀԱՅԱՀԱՏԻԿ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ Անցնել տարուան երաշտի հետեւանքները դարձան նպատակով...

ԹՐԱՏԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՐԺԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄ ԵՒ ԱՅԼ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ



(Լուսանկարը՝ Զուլէն Կարդաճի)

Ուրբաթ, 22 Փետրուարի յետմիջօրէի ժամը 4:00ին, Թրատի Հայ Աւետարանական վարժարանին մէջ տեղի ունեցաւ նորակառոյց գրադարանի բացումը...

Բացման խօսքը արտասանեց վարժարանի տնօրէն-նուէրի վերա Սվաքեան, որ ըսաւ, թէ՛ «գրադարանը ոչ միայն գիրքերու հաւաքածոյ է, այլ նաեւ՝ պաշտպանական ծառայութիւններ կատարելու եւ միտք գործադրելու վայր»:

Ան շնորհակալութիւն յայտնեց վարժարանի հոգաբարձու Սեւակ Սահակեանին, որ հոգաբարձու ծառայութիւններ կատարելու եւ միտք գործադրելու վայր է...

Ան իր խօսքի բաժնի յայտնեց, որ հետագային գրադարանը պիտի բացուի նաեւ ծնողներուն առջեւ՝ ընթացակարգով...

Ան նաեւ յայտնեց, որ թէ՛ վերանորոգումներ պիտի ըլլան, աւոյ՛նք պէտք է որ սկսին կրթական օժանդակներ, որպէսզի հայուն շինարար ոգին վրայ...

ՄԱՐՏԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՆ՝ ԲԱՌԱԿԱՆՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՊՂՀի կողմէ պետութիւններու միջխորհրդարանական վեճաժողովի ղեկավարը...

25 - 28 Մարտին Ա. Փեթերսպուրի մէջ պիտի գումարանակարան համաժողովը, ԱՊՂՀ Միջխորհրդարանական միջխորհրդարանական մայրաքաղաքի:

Ա. Փեթերսպուրի հանդիպումներուն շրջագիծին մէջ պիտի կայանայ նաեւ «կովկասեան քառեակի»...

ՀԱՄԱԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՍՏԵՆ. HAMPIG SASSOUNIAN CSP - L.A.C. B - 5 - 131 44750 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 - USA

«ՄԱԿԻ ՊՈՒՐԱԿ» ԴԱՏԻԹԱՇԷՆԻ ՄԷՋ

8 Մարտին, ՄԱԿԻ հաստատան գրասենեակի նախաձեռնութեամբ, Դաւիթաշէնի շրջ թաղամասին մէջ կատարուեց համաժողով...

ՄԱԿԻ հանրային տեղեկատուութեան վարչութեան պետ Վալերի Թոքաչուք ըսած է, թէ այս քայլով հիմը կը դրուի գաղութացման օժանդակում տարածքներու կառուցման արագացման քաղաքական քայլերին, որ կը միտի վերականգնել նախկին գեղեցիկ պուրակներն ու պարտէզները:

Պարէնի համաշխարհային ծրագրի ներկայացուցիչ հայաստանեան գրասենեակի տնօրէն Էրիթա Կեոկեան ըսած է, թէ ինչպէս միշտ, այս անգամ եւս ընտրուած է այնպիսի տարածք մը, որ կամ ծառայողական կատարուած է եւ կամ ամառի է ու սահմանք ենթակառուցում: Ան նշած է, թէ տունները բերուած են ՄԱԿԻ տնկարաններէն եւ արդէն շուրջ 3 միլիոն ծառ տնկուած է Հայաստանի մէջ:

Տակաւին 2 տարի առաջ ամբողջովին լերկ պուրակին մէջ յայտարարուեց նաեւ հարկէ աւելի տուեցին, որոնց կողքին աւելցան խնամքը, տնամերթի, կաղնիի եւ այլ 100 տուեցին: Ըստ Դաւիթաշէնի թաղապետ Սուրէի Լուկասեանին, այս վայրը կանաչապատեցած ծրագիրը արդէն կար, իսկ հիմա անոնց խնամքը ծանոթուած է թաղամասի կանաչապատման ընկերութեան:

ԻՐԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱԶՍԱՐ


ԵՒՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ Կ'ՕԺԱՆԴԱԿԷ ԱՆՈՐ ԿԱՌՈՒՅՄԱՆ

«Արմինֆօ» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Եւրոպական Յանձնաժողովը պատրաստակամութիւն ցուցաբերած է օժանդակելու Հայաստանի - Իրան կազատար խողովակի ծրագրին իրականացման: Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան ծրագրերը համադրողը ըսած է, թէ Հայաստանի, Իրանի եւ Եւրոպական Յանձնաժողովի ետեւողովմանի հանդիպումի մը ընթացքին քննարկուած են Ասիայի Եւրոպա կազատար խողովակի կառուցելու միջկառավարական ծրագրին հեռանկարները: Մակայն հիմնական հարցը այն է, որ Իրան եւ Հայաստան առեւտրական հարցերու առնչութեամբ տակաւին համաձայնութեան չեն յանդատ:

Եւրոպական Յանձնաժողովի ներկայացուցիչը շեշտած է, թէ մեծ հետաքրքրութիւն կայ Իրան - Հայաստան կազատար կառուցելու նկատմամբ, նկատի ունենալով, որ այդպիսով շեշտած է, թէ կազատար Հայաստան պիտի ունենայ կազմի մնացեալ անոնց քաղաքական պատրաստակամութիւնը պատրաստակամութիւն ցուցաբերած է օժանդակելու Հայաստանի - Իրան կազատար խողովակի ծրագրին իրականացման: Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան ծրագրերը համադրողը ըսած է, թէ Հայաստանի, Իրանի եւ Եւրոպական Յանձնաժողովի ետեւողովմանի հանդիպումի մը ընթացքին քննարկուած են Ասիայի Եւրոպա կազատար խողովակի կառուցելու միջկառավարական ծրագրին հեռանկարները: Մակայն հիմնական հարցը այն է, որ Իրան եւ Հայաստան առեւտրական հարցերու առնչութեամբ տակաւին համաձայնութեան չեն յանդատ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՄԱՐՆԵԱՆԻ ՄԱՀՈՒՄՆ ԲԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Վարդանանց տօնակատարութեան օրերուն կը զուգարդի վարդանին եւ համեմատ գիտնոր եւ ուրարակիր՝ Յարութեան Գասարեանի մահը: Փոքր տարիքէն Նոր Մարաշի Բառասնից Մանկանց դպրոցի աշակերտութեան օրերէն ան ծառայեց հայ եկեղեցւոյ խորանին՝ իրրեւ դպիր եւ ուրարակիր:



Եղաւ Հ. Մ. Լ. Մ-ի անդամ ու վարչական, եւ մարզական այս կազմակերպութեան իտէլիան «Բարձրագիտ - Բարձրացուր» նշանաբանին իր գործով հաւատացող անդամ: Դարձաւ դաշնակցական ընկեր խորապէս հաւատալով, որ Դաշնակցութեան շարքերուն մէջ աւելի բեղմնաւոր կրնար դառնալ իր ազգային ծառայութեանց դաշտը:

Եղաւ ընտանիքի նուիրուած եւ զոհարեցող հայր, մնաց ծառայաւոր դպիր ու ուրարակիրը հայ եկեղեցւոյ խորանին՝ 60-ական թուականներէն սկսեալ մինչեւ իր կեանքին վերջին օրերը: Հ. Մ. Լ. Մ-ի շարքերուն մէջ առողջ մարմնով ու մտքով, ջանաց օգնել իր նմաններուն, ընտանիքին եւ զաւակներուն բարձրացման: Հ. Յ. Դաշնակցութեան անդամագրուելով՝ հաւատաց, որ իր կուսակցութեան դաւանած իտէլիաներուն ճամբով հայութիւնը ապահովաբար պիտի հասնէր ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի կերտումին ամբողջական հայութեանը: Հայութեան վառ երազին հաւատալով, հայ եկեղեցւոյ խորանին իրրեւ դպիր եւ ուրարակիր, Հ. Մ. Լ. Մ-ի մարդկայնական եւ ազնուացող «Բարձրագիտ - Բարձրացուր» նշանաբանով՝ ան բարձրացուց իր շրջապատը, այս ոգիով վարակեց նաեւ իր զաւակները, եւ մինչեւ իր վաղահաս կեանքին վերջին պահերը իր գիտակից կեցուածքով դարձաւ հայութեան իտէլիաներուն յանձնառու զաւակը: Տխուր է բաժանման վիշտը: Յաւալի՛ մահուան գաղափարը եւ անոր ճնշող իրականութիւնը:

Եւ սակայն, երանելի է այն հայրը, որ Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական, Հ. Մ. Լ. Մ-ի մարզական եւ հայ եկեղեցւոյ ուրարակիր դրօշներով զոհուած հայրու մեկնին այս աշխարհէն, մեզի մնացողներուն, իր ընտանիքի անդամներուն, պարագաներուն եւ իր ընկերներուն՝ ժառանգ կտակելով իր խոր հաւատքն ու հայակերտումի գործը շարունակելու յանձնառուութիւնը: Ատուծոյն եւ հայ եկեղեցւոյ միջխորհրդարանք՝ իր ընտրուած պարագաներուն, եւ վարդանի համեստ ու հաւատաւոր գիտնորի կամքը նեցուկ եւ խթան մեզի իր ապրող ընկերներուն: Հողը թեթեւ՝ Դաշնակցական ընկեր:

ԸՆԿԵՐ ՄԸ

ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐԻ ԿԱՊԱՆԻ ՄԷՋ

Կապանի մէջ տարիներէ ի վեր կը գործէ յատուկ կրթութեան արհեստագործական գիշերօթիկ դպրոցը, 4 տարիէ ի վեր Նուպարաշէնի յատուկ դպրոցն տեղափոխուած 27 հաշմանդամ երեխաներուն կողքին, դպրոց կը յաճախեն կապանցի մանուկներ, որոնց 35 աւ հարիւրը միակողմանի եւ երկկողմանի որբեր են:

Դպրոցի տնօրէն Ռիթա Դաւթեան ըսած է, թէ Հայաստանի մէջ Քանադայի դեսպանատունը փափաք յայտնած է դպրոցին օժանդակելու: Ան նշած է, թէ դպրոցին նուիրուած է այլ տեսակի օգնութիւն կը տրամադրուի Գերմանական Բեթեմիք Համագործակցութեան Կապանի գրասենեակի եւ Հայաստանի մէջ Բրիտանիոյ դեսպանատան կողմէ:

Ռ. Դաւթեան աւելցուցած է, որ այսօր հակառակ դպրոցին քով օրեւէ արտադրամասի կամ գործարանի ստեղծումը՝ դպրոցի հաշմանդամ աշակերտներուն գործ հայթայթելու համար:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումը բնագիր ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՛ հաստատուած ներկայացնել «Ազգակ» ծանուցումներու գրասենեակը:

7րդ Արուեստ



ՀՈՒՎՈՒՏ ԿԸ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԷ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԺԱՊԱԻԿՆԵՐՈՒ ԺԱՆՐԸ

Վիեթնամի պատերազմին եւ անոր յաջորդող տասնամեակներուն, պատերազմական եւ յատկապէս Վիեթնամի անհնչող ժապաւններ արտադրելու Հոյակապ տրամադրուած թիւնները նուազած կը թուէին ըլլալ 1990ականներուն:



Տեսարան մը՝ «Հարթ ուր» ժապաւնէն:

ներուն, երբ 1999ին Սթիվըն Սփիլլըրը «Սէյվինկ փրայվէթ Ռայնը»-ը անկիւնադարձ մը եղաւ պատերազմական ժապաւնէններու ժանրին մէջ: 1944ի Նորմանտիի ցամաքահանումին ընդմէջէն ջրկատի մը անդամները յարաբերութիւնները ներկայացնող այս ժապաւնէրը անուղղակիօրէն մղում տուաւ այլ բեմադրիչներու՝ վերջին երկուերեք տարիներուն պատերազմային ընդմէջին ալ գործեր:

Շաբաթան Ժապաւնը «ՊԼԷՔ ՀՈՔ ՏԱՌԻՆ»

«Միայն մահացած պիտուր մը կրնայ տեսնել պատերազմին աւարտը»: ՊՂՏՈՆ



1993, Մոկատիշօ, Սոմալիի մէջ կը տիրէր քաոս եւ սով: Մոհամմէտ Այտիտի գլխաւորութեամբ կը խլէր ՄԱԿի կողմէ առաքուած նպաստները: Ամերիկեան մասնաշաղկապները ջոկատներ բանակած են ծովեզերքը եւ կը նպատակադրեն ամերիկեան ռեմոնտի տեղի կացութեան: Կը ծրագրուի արագ յարձակումով աւարտել առաքելութիւնը:

ՄԱՍՆԱԿՑԷ ԵՒ ՇԱԿԷ

24 Մարտին տեղի ունենալիք «Օսքար»ներու 74րդ մրցանակաբաշխութեան նախօրեակին, «Ազդակ» կը կազմակերպէ «Օսքար»ի հաւանական մրցանակակիրները ձեռնարկ մը, որ պիտի երկարի 8Ը 23 Մարտ:

- ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
- 1.- Մրցումին կրնան մասնակցել բոլորը, բացի «Ալիանս»ի անձնակազմէն եւ աշխատակիցներէն:
 - 2.- Հարցումին պատասխանել՝ նախընտրաբար չոր մեկնումով նշելով ձեռնարկէն մէջ գրելով «Օսքար»ը շահողին ձեռք նախատեսութիւնը:
 - 3.- Պատասխանները եւ մասնակցութեան կտրոնները ամբողջացնելէ ետք, պահուած նշում տեղէն կտրելու փակ պահարանի մը մէջ դրած՝ յանձնել «Ալիանս»ի խմբագրատուն, ամէնէն ուշը մինչեւ 23 Մարտ 2002ի կէսօրին: Պատասխանները կարելի է յանձնել նաեւ հետեւեալ կեդրոններէն որեւէ մէկուն.
 - Գրատուն «Օպէլիք»- Միջրկիսա
 - Գրատուն «Սալա»- Այնճար
 - Գրատուն «Կոմիտաս»- Պէյրութ
 - Գրատուն «Ուրֆայեան»- Պորթ Համուտ
 - Գրատուն «Քարալէյ»- Չալքա
 - Ալգ. Նուպարեան-Խրիսեան վարժարան-Թրիփոլի
 - 4.- Մրցումը «Ալիանս»ին մէջ պիտի հրատարակուի վեց հազար տարածքով: Իւրաքանչիւր հաւանական բաղկացած պիտի ըլլայ թեկնածութիւններու չորս բաժնիներէ (ընդհանուր՝ 24 բաժնի): Մրցումին առաջին երկու մասերէն իւրաքանչիւրը յոյս պիտի տեսնէ յաջորդական երեք օրերու ընթացքին, իսկ մնացեալ չորս մասերէն իւրաքանչիւրը՝ յաջորդական երկու օրերու ընթացքին: Մասնակցողները կրնան յրկէլ միայն մէկական լուծում, որուն համար պէտք է գործածուի թերթին կտրուած կտրոն մը: Լուսապատճէն կամ ընդօրինակութիւն ընդունելի չեն:
 - 5.- Իւրաքանչիւր ձեռք պատասխանի համար մասնակցողը կը ստանայ մէկ կէտ: Բոլոր հարցումներուն ձեռք պատասխանողները կը ստանան 24 կէտ:
 - 6.- «Օսքար»ներուն արդիւնքները, առաւելագոյն կէտ հաւաքողներէն եւ մրցանակատիրներուն անունները պիտի յայտարարուին հետագային: Իւրաքանչիւր հաւանական պահանջուած կէտերու գումարը մէկէ աւելի մասնակցողներու կողմէ պահովուելու պարագային, մրցանակատիրներուն անունները պիտի որոշուին վիճակաձգութեամբ: Բախտաւորներուն դասաւորումը պիտի կատարուի հետեւեալ ձևով:

- 10-24 կէտ հաւաքողը պիտի ստանայ Պէյրութ - Լոս Անջելէս - Պէյրութ օդանաւի տոմսակ մը:
- 10-19 կէտ հաւաքողներէն երեք հոգի պիտի ստանան անգլիական ոսկի մը, «Սանիթ» ՍԻ. ՏԻ. ՓԷՅԵՐ մը, շարժապատկերի 10 տոմսակ եւ 10 թիշ-ՔՐԹ:
- Սընթք, որ կէտերու իւրաքանչիւր դասաւորումին պիտի ընտրուի միայն մէկ մրցանակաւոր:

9. ԱՄՍ
- 9.- ԼԱՒԱԳՈՅՆ ԲԵՄԱԳՐՈՒՄ
 - «Է պիտի թիֆուլ մայնտ», Ռոն Հաուրտ
 - «Պէյք հոք տաուն», Ռիտի Սքաթ
 - «Կոսմոս փարթ», Ռոպերթ Ալթման
 - «Տը յորտ աֆ տը ռիսկ», Փիթըր Ժէքսըն
 - «Մուլիոլըն տրայվ», Տէյվիտ Լինչ
 - 10.- ԼԱՒԱԳՈՅՆ ՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱԻԿԵՆ
 - «Զիլտրըն անտրերկրաւունտ», Էտէք Պէյլպըրկ
 - «Լայիվ քին. տը յեկըսի աֆ քարթը», Սիւլբե Ֆրոնքէ
 - «Մըրտըր օն է սանտէյ մորնինկ», Տան Խաիէ Տը Լեարթաւ եւ Տենիս Փոնտէթ
 - «Փրոմիսը», Ճասթին Շափիթո եւ Պ. Զ. Կոլտպըրկ
 - «Ուոր ֆրոնկէթը», Քրիսթիէն Ֆրէյ
 - 11.- ԼԱՒԱԳՈՅՆ ՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ ԿՄՐՃ ԺԱՊԱԻԿԵՆ
 - «Արթիսթ էնտ օրֆընդ. է թրու տրամա», Լիան Բիէֆըր Մըքնէյի
 - «Սիւնկ», Ֆրիտա Լի Մոք եւ Ճէնիքա Սէնտրոպ
 - «Թոք», Սէրա Բերնշան եւ Լին Սիֆել
 - 12.- ԼԱՒԱԳՈՅՆ ԺԱՊԱԻԿԵՆ ԽՄԲԱԳՐՈՒՄ
 - «Է պիտի թիֆուլ մայնտ», Մայք Հիլ եւ Տէն Հէյլի
 - «Պէյք հոք տաուն», Փիթըր Սքաթ
 - «Տը յորտ աֆ տը ռիսկ», Ճոն Կիլպըրթ
 - «Մեմէնթ», Տոմ Տոմ
 - «Մուլիէն Ռու», Ճիլ Պիթըր

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

ԱՆՈՒՆ <ՕՐ ԱՆՈՒՆ.....

ՄԱԿԱՆՈՒՆ.....

ՏԱՐԻՔ..... <ՆՈՒԱԶԱՅ.....

ՁԲԱՂՈՒՄ.....

<ԱՍՅԷ.....

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄՐԱՀՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Լիբանանեան շարժապատկերի արահներուն մէջ այս շաբաթուան գերիշխող նորութիւնը «Պլէք Հոք տաուն» ժապաւնէնն է: Անոր կ'ընկերանան արկածախնդրական եւ դադարի ոստիկանական երկու ժապաւնէններ, որոնք նշանակալից նորութիւն չեն բերեր իրենց ժանրի ժապաւնէններուն մէջ:

CINEMAX FREEWAY

ԿԸ ՑՈՒՑԱԳԷ՝

«Քրոնոտայլ Տանտի ին ...»

«Է պիտի թիֆուլ մայնտ»

«Ալի»

«Ռեպիլեթը»

«Օշնգ իւլվըն»

«Շայտ էնտ սիք»

FREEWAY

Շաղէ՛ Սենթր Ֆրոնտ, Սիւն Էլ Ֆիլի Մայրուղի - հեռ. 01/485590-91:

Դիպաշարի նկարագրութիւնը թէ լրատուութիւն, կարելի է հարց տալ: Բացառիկ նկարահանումով եւ ուժեղ կշռոյթով պատերազմական այս ժապաւնէրը առաւելագոյն չափով փորձած է հարազատ մնալ դեպքերու իրական ընթացքին, թէկուզ՝ վաւերագրական ժապաւնէնի բնոյթ ունենալու գնով: Ժապաւնէնը կը բացայայտ կեդրոնական տիպար մը, որ իր հերոսութիւններով պիտի ներշնչէ իր ընկերակիցները եւ դեպքերուն պիտի տար բարեյաջող ընթացք: Փոխարէնը ժապաւնէնի մէջ իւրաքանչիւր գիւնուր գործած է կեդրոնական տիպար մը, որ այս կամ այն ձևով նկարագրական ազդեցութիւն կընայ ունենալ դեպքերու ընթացքին վրայ: Հերոսներ են իրենց վիրաւոր ընկերները չլրող կամ մահամերձ ընկերները յուսադող գիւնուրները:

ԱԼԻ ԱՊՏԱԼԼԱ ՍԱԼԷՆ - ՏԻՔ ՉԷՅՆԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԻՆ ԵՄԷՆ ՄԵՐԺԵՑ ԻՐԱՔԻ ԴԵՄ ՈՐԵՒԷ ՅԱՐԶԱԿՈՒՄ



ՉԷՅՆԻ ԵՒ ՍԱԼԷՆ

Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիք Չէյնի երէկ Եմէնի պորակցութիւնը ապահովեց ահաբեկչութեան դէմ Ուաշինկթընի կեցածքին, սակայն չյաջողեցաւ նոյն պորակցութիւնը ապահովել Իրաքի դէմ ամերիկեան պիւտրական գործողութեան մը:

Եմէնի նախագահ Ալի Ապտալլա Սալէի խորհրդատուն ըսաւ, որ նախագահը Չէյնիի յայտնած է, թէ կը մերժէ Իրաքի դէմ յարձակում մը, որովհետեւ անիկա պիտի սկսանաւ արդարապէս կայունութիւնը: «Կրակին վրայ լաւելեալ ձեռք չենք ուզեր», ըսաւ խորհրդատուն, որ դիտել տուաւ, թէ այս հանգրուանին Իրան-Եմէնի վարկերը պարզապէս հարցը:

Չէյնի իր կարգին ըսաւ, որ Սալէի հետ խորհրդակցած է շատ մը հարցերու մասին, որոնց կարգին էին պաղեստինեցիներու տագնապը, ահաբեկչութեան դէմ պատերազմն ու Իրաքը: Չէյնի, որ Իրաքի դէմ գործողութեան մը պորակցութիւնը ապահովելու շրջապատով մը մտնարկած է, աւարտելէ ետք Եմէնի այցելութիւնը, Օման ուղղուեցաւ: Կիրակի օրուին է ի վեր ան այցելած է Բրիտանիա, Յորդանան, Եգիպտոս եւ Եմէն:

Եգիպտոսի մէջ, Չէյնի յաջողեցաւ ապահովել պորակցութիւնը նախագահ Հուսէյն Մուսայարաքի, որ խոստացած է ճշմունք բանեցնել Իրաքի վրայ, որպէսզի արտօնէ ՄԱԿի պէնիքս քննիչներուն վերադարձը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՈՒԺԵՐՈՒ ԸՆՆԱՐԿՈՒՄ

Բրիտանացի, թուրք եւ ամերիկացի բարձրաստիճանի պաշտօնատարներ երէկ Անգարայի մէջ քննարկած են ԱՖղանիստանի միջազգային խաղաղարար ուժին թուրք քիմիոյ կողմէ հրամանատարութիւնը ստանձնելու հարցը, սակայն անմիջապէս որոշում չէ գոյացած:

Բրիտանիա, որ ներկայիս կը գլխաւորէ միջազգային ուժը, կ'ուզէ կարելի եղածին չափ շուտ յանձնել հրամանատարութիւնը, սակայն թուրքերէն ալ զգոյց իր որոշումը կ'ուշացնէ:

Դիւանագէտներ յայտնած են, թէ թուրքերէն պայմաններ դրած է Յուսէյնի սկսեալ միջազգային ուժին ղեկավարութիւնը ստանձնելու համար:

Վարչապետ Պիւլէյնիմ Էնելիթ ըսած է, որ թուրքերէն կ'ուզէ գիտնալ, թէ այլ ո՞ր երկրներէն կ'ուզէ ղեկավարութիւնը ստանձնել, թէ արդիւնք միջազգային ուժին առաջնութիւնը մայրաքաղաք Պրաքայի մէջ կ'ուզէ ղեկավարութիւնը ստանձնել, որ թուրքերէն կ'ուզէ գիտնալ, թէ արդիւնք միջազգային ուժին առաջնութիւնը ստանձնելու համար:

Խանցուածին գծով» եւ թէ «մեր կարգ մը մասնագէտները պիտի մնան մէկ կամ երկու օր՝ թեքնիք հարցերը քննարկելու համար»:

ԱՖղանիստանի փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարհար, որ այս ամիս Անգարա պիտի այցելէ, յայտնած է, թէ կ'ուզէ, որ միջազգային ուժին առաջնութիւնը Քապուլէն անդին տարածուին:

Քարհար Չորեքշաբթի օր գերմանական պատկերասփիւռի կայանի մը յայտնած է, թէ պիտի ողջունէ եթէ Գերմանիա ստանձնէ միջազգային ուժին հրամանատարութիւնը, սակայն զիւանագէտներ յայտնած են, թէ Պերլին այդ առաջնութիւնը չի կրնար ստանձնել:

Փաքիստանի նախագահ Փերվէշ Մուշարրաֆ երէկ կող ուղղած է, որ միջազգային ուժը ԱՖղանիստան մնայ մինչեւ որ կայունութիւնը հաստատուի երկրին մէջ:

Պիւլէյնի, արեւելեան ԱՖղանիստանի մէջ աֆղան, քանատացի եւ ամերիկացի զինուորներ երէկ գոչու կերպով մտած են «Քաշիտա»ի եւ թալիբան զինեալներու ապստան դարձած ականուած քաղաքներ՝ վաւերութեամբ թերու փնտռուելով:

Ամերիկեան գլխաւորութեամբ ուժերը Երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերուն ի վերջոյ զրամանատարութեան փոխանցուած են:

ՄԱՍԿՈՒՄ, 14 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ կառավարութիւնը Հինգշաբթի օր համալսարանը անցեալին հետոյ յայտնեց, որ 1917ի պոլշեիկեան լեյափոխութեան ի վեր առաջին անգամ ըլլալով երկրագործական հողերու վաճառքը կ'արտօնէ:

Երկրագործական հողերու վաճառքին համար օրինական ծիրի մը հաստատումը նախագահ Վլատիմիր Փութինի տնտեսական բարեկարգումներու ծրագիրին կարելի մը մասը կը կազմէ: Անոնց նպատակն է ներդրումներ ներգրաւել երկրին երկրագործութեան «նիւրաբեկ» մարդին համար:

ՎԱՐԶԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԴՈՒՆՓՎԱԺՈՂՈՎ ՄԸ ԳՈՒՄԱՐԵՑ... Ծարուցակուած Ա. ԷջԸ

ՇԱՀԱՐԵՐ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՔՔ ԲԱՐՈՉՉԱԿԱՆ... Ծարուցակուած 7րդ ԷջԸ

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5100 Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

ԹԻԻ 5099 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

ՍԱԿԱՐԱՆ Պէյրութի սակարանին մէջ օտար դրամ-Գիշերու փակման սակագիներ հետեւեալ-Գերն էին երէկ.